

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Իրկու թիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանուցանել տուող

20 Եւրոպայ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԳՈՐԻ ԱՄՍԵ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

Հ Ա Ս Տ Է

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

յան տրուիր

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Մեր ընթերցողներուն ծանուցինք արդէն թէ՝ շատ տեղերէ մեզի եղած խնդրանքներու համակերպելով, որոշած ենք գրքի ձեւով ալ տալն ինչ հրապարակ հանել մեր թերթին՝ ԹԻԱՊԱՐՏԸ, ազգային լեզուովս կան ժամանակակից դիպրաւմներէ, հետաքրքրաշարժ պատահարներէ առնուած վէպ մը, որուն ընթերցող հանրութեան կողմէ գտած ընդունելութիւնը, իրաւ մեր ակնկալութիւններն ալ զից գերազանցեց: Անշուշտ, Արտասահմանի մէջ շատ հայ լեզուներ, տեղային նպաստաւոր պարագաներէ օգտուելով, մեր արդի վիճակը շօշափող վէպեր կամ պատմութիւններ հրատարակեցին. բայց, կը համարձակինք ըսելու, անոցմէ ոչ մէկուն մէջ կը գտնենք այն վառ, յուզիչ նկարագրութիւնները, իրարու յաջորդապէս շղթայուած մերթ ողորդելի, մերթ սիրային, մերթ եղբրական անակնկալներու ճոխ շարքը, որոնք մասնաւորապէս կը յատկանշեն մեր վիպագիր-աշխատակից Պ. Շիտանեանի հեղինակութիւնը. այս յաջողութեան մէկ գլխաւոր գաղտնիքն ալ անշուշտ հոն է որ, հեղինակը իր վէպին զանազան իրադարձութեանցը մեծագոյն մասին գրեթէ ականատեսը կամ ականջալուր վկան եղած է. երկար տառն ընկած ըլլալով ա.ն վայրերը, այն մթնոլորտին մէջ, ուր վէպին գերակատարները կը շրջնեն, լիապէս ծանօթացած է տեղային ցեղերու ուրոյն սովորութեանցը, զանոնք բնորոշող կրօնական աւանդութեանց, կամ Հայերու վերաբերութեամբ անոնց յարաբերութեանց: ԹԻԱՊԱՐՏԸ վերջին մասը տակաւին տառն մը տեւելու է. սա. կայն, նկատողութեան առնելով այս վէպին ժողովուրդին կողմէ գտած ընդունելութիւնը, միջոցներ ձեռք առած ենք որպէսզի ԹԻԱՊԱՐՏԸ վերջաւորութենէն ետք նոր թերթին մ'ալ հրատարակութիւնը սկսինք, յատկապէս իրաւունքի ընթերցողներուն համար հեղինակուած, ու նոյնպէս ազգային արդի պատահարներէ ներշնչուած:

ԽՄԱՐԱԳՐՈՒԹԻԻՆ

Գիրքը երկու հատորներէ բաղկանալու է, եւ արդէն մեծագոյն մասը տպագրուած ըլլալով, վերջին մասին տպագրուելու ալ աշարտելու մօտ է. հետեւապէս երկու հատորներն ալ մօտ օրեր հրապարակ կ'ըլլեն:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ 2 ՖՐԱՆԿ Է

Ստանալ փախաբողները այդ երկու ֆրանքը այժմէն խաւքազորներէն զրկելով, կրնան վստահ ըլլալ թէ ԹԻԱՊԱՐՏԸ կազմուած երկու հատորները քիչ ատենէն կ'աւանան: Այս պատիկ գումարը մեզ հասցնելու դիտարկեալ համար կը յայտարարենք թէ փոխարէնը 10 Ե/Օ զեղչով առնել երկրի նամակադրով կընդունինք:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Իրաւունքի ընթերցողներուն ծանուցինք արդէն թէ՝ կողմասի Ընդ. կառավարչութիւնը, Նիքոլայ կայսեր ստորագրութեամբ վաւերացուած կանոնադրութիւն մը հրատարակեց, վերաբերութեամբ 1896ի կոտորածներուն առիթով Ռուսիա պատասխան տալիս, գաղթականներու կանոններու. այդ նոր կանոնադրութեանց համաձայն, 1896ի թուրքիայէն փոխող բոլոր հայ գաղթականները, որպէսզի Ռուսական հողին վրայ ապրելու արտօնուին, պարտաւոր էին անյապող ռուսահայտակարութիւնը ընդունիլ, կամ անմիջապէս թուրքիա վերադառնալ: Իսկ այն գաղթականները, որոնք ռուսահայտակարութիւն ընդունելու յանձն կ'առնէին, միանգամայն պարտաւոր պիտի ըլլային երկրին զինուորագրական բոլոր օրէնքներուն հպատակելու, տեղային բնակիչներու համահաւասար կերպով բոլոր տուրքերը վճարել, և որ աւելին է, մինչեւ 20 տարի զուրկ պիտի ըլլային քաղաքներէ գուրս շարժական ստացուածքի տիրաւորութեան իրաւունքէն:

Կողմասի կառավարչութեան այս խիստ որքան քմահաճ օրէնքներուն առջեւ, հայ գաղթականներէ կարեւոր մաս մը, որ 1896էն ի վեր Ռուսիա մնացած ըլլալով կանոնաւոր զբաղումի, գործի, տունի ինչպէս բնաւորիքի ու զաւկի տէր եղեր էր, պարտաւորուեցաւ իրենքու նոր վիճակին համակերպելու. բայց միւս կողմէ, գաղթականներու ոչ նուազ կարեւոր հատուած մըն ալ, մերթելով այս անիրաւութեանց ենթարկուելու, նախընտրեց հայրենի բնակավայրը վերադառնալ, արհամարհելով անստուգ ու արկածալից վերադարձի մը վերապահած բոլոր վտանգները: Ս. 7000ի չափ հայ գաղթականներ, կողմասի քաղաքներէ ճամբայ կ'ընէին համախմբուելու համար կարսի մէջ, որկէ խմորին ճաճ կաւտանի սահմանադրութիւնը ռզ. զուելու մտադրութիւն ունէին. այդ գաղթականներու մեծամաս.

նութեան վիճակը ամենալիտին չբարորութիւն մը կը նկատուէր. ոչ իսկ կարողութիւնը առնելու ճամբու ծախքերը վճարելու. այս առթիւ թիֆլիսի Մշակ օրաթերթը իր սիւնակներուն մէջ հանգստեան կուլիւն մը բացաւ, որկէ 800 ռուբլի չափ գումար մը տրամակազմելու յատկացուեցաւ. միեւնոյն ատեն հանգստեան կուլիւնը ընդունելու համար Թանձնախումբ մը կը կազմուէր, որուն ջանքերուն շնորհիւ միջոցներ ձեռք կ'առնուէին որպէսզի գոնէ մինչեւ սահմանա. գլուխ գաղթականներու ընկերանան մէկ քանի բժշկներ, դեղերու մթերքով մը. նաեւ հոգ պիտի տարուէր որ գաղթականները մասնաւոր օթեւաններու մէջ, ցուրտին դէմ պատասպարան գտնեն. Գաղթականները օգոստոս 20ին կ'ալան կը հասնին. անոնցմէ մէկ մասը արդէն իսկ անմիջական օգ. նութեան մը համար տեղոյն առաջնորդին մօտ դիմումներու կրսկսին. իրենց վիճակին նկատմամբ բացարձակապէս անստուգութեան, անորոշութեան մատնուած, անոնք երկրի վրայ խնամակալութիւն չի գտնելով, բնականաբար բոլոր գրգռեցողութեան յետին ապաւէնին՝ Աստուծոյ վրայ իրենց ակնկալութիւնը կը դնեն կարսէն Սիւրբաբեք 2ին գաղթականները կուլիւն գէպի Սար-Քամը, ուր անոնց ինչպատան միջակապէս 85 ռուբլի գումար մը կը հաւաքեն. ինտոյ կուլիւն գէպի Բաշ-Քէօյ, Ռուս և թուրք սահմանագլխին վրայ գիւղ մը, որկէ ալ թըքական սահմանները անցնելու են. Սեպտ. 6ին գաղթականներու մեծագոյն մասը արդէն համախմբուած էրն Բաշ-Քէօյ, Արմուտ, Կիւլեան թէփէ, Գարա-Բուլար, Չուրուք և իստահան հայաբնակ գիւղերու մէջ. ուր հայ գիւղացիներու կողմէն ամենաօրաւոր հիւրընկալութեան մը կը հանդիպին. Գաղթականներէ սմանք կը իջնեն գէպի իրքական հողերը ուղղուելու, բայց սահմանապահ գուրդին թուրք հրամանատարը անոնց մուտքը կարգիլ է: Այնպէս որ այդ թուրքները, իրենց ունեցածը չունեցածը ուղեւորական ծախքերուն համար

(Եւրոպայէի)

կողմն ալն է որ, երկրին գերագոյն կամքը ներկայացնող խորհրդարանին առջեւ այսքան բացորոշ, այսքան «քաջափայլ» պարտութիւն մը կրելէ ետք, կառավարութիւնը տակաւին կը

յարատեւէ իշխանութեան վրայ մնալ: Սահմանադրական ճշտարիտ երկրի մը մէջ, ինչպէս է Անգլիոյ կամ Ֆրանսոյ, խորհրդարանէն կրած այսպիսի պարտութենէ մը ետք, կառավարութիւնը անմիջապէս իր հրաժարականը մատուցանելու պիտի շտապէր: Բայց Գիրմանիա անուամբ միայն Սահմանադրական է. Գիրմանիա կը վայելէ տիրապետութիւնն այնպիսի ինքնակալի մը, որ երբեք չը հանդուրժէր իր որեւէ կամքին ու քահանայքին դէմ ամենափոքր դիմադրութիւն մը, ու կը նկրտի երկրին մէջ Սահմանադրական-Բոնակալական կառավարութեան նորատպ գրութիւն մը հիմնել:

Բայց միւս կողմէ, եթէ կառավարութիւնը խորհրդարանին կամքը կը քամահէ, եթէ վիճելէ կայսրը բնաւ տրամադիր չիլու իր ներքին թէ տրտաքին քաղաքականութիւնը ուղղելու համար ուրիշներու խորհուրդներուն անսալու, անշուշտ պիտի կրնար, եթէ ուզէր, անմիջապէս խորհրդարանը լուծել, Սահմանադրութեան իրեն տուած իրաւունքին համաձայն, ու երկիրը հրաւիրել որ կառավարութեան որոշումները քուէարկող նոր խորհրդարան մը ընտրէ:

Հոս խնդիրը ճշմարիտ կատակերգութեան մը գոյնը կառնէ. արդարեւ, մաքսային սակացոյցի այս վիճաբանութեան միջոցին, կառավարութիւնը որ մինչեւ այն ատեն երկրագործականներու եւ կղերականներու պաշտպանութիւնը կը վայելէր, զանազան իրեն հակառակորդ ունեցաւ, ու սոսկուածով տեսաւ որ իրեն ի նպաստ քուէարկողները այս անգամ իրեն երդուեալ թշնամիներն, յառաջդիմականներն ու ընկերակցականներն էին. արդ, կառավարութիւնը կուզէ որ առաջ մէջ տեղէն վերցնել այն սեւ կատուն որ իրեն ու իր կուսակիցներուն մէջ տեղէն անցնելով գինքը անոնց հետ հակառակեցուց ու իր թշնամիներուն կողմը նետել: Ինչ ընել. խորհրդարանը լուծել. այդ շատ զիւրիշ է. բայց, տարօրինակ բան, ճշգրիտ կառավարութիւնը ամէն բանէ աւելի կը սարսափի նորընտիր խորհրդարանին մէջ իր տանելիք յաղթութենէն իսկ, քանի որ երկիրը կառավարութեան ի նպաստ քուէարկող երեսփոխանները յառաջդիմականներու եւ ընկերակցականներու շարքերուն մէջէն պիտի ընտրէր: ու ալ նոր խորհրդարանին մէջ կառավարութեան պաշտպանները, երկրագործականներն ու կղերականները պարտեալ փոքրամասնութիւն մը ներկայացնելով, առաջիկային մէջ ընկերակցական ու ազատական տարրերը պաշտպանել պիտի ձգտէին այնպիսի կառավարութիւն մը որ ամէն բանէ առաջ մոլեգին հակառակորդն է սահմանադրական բարեփոխութեանց եւ ընկերային առաջդիմութեանց. ահա այս պատճառներով, կառավարութիւնը, ստոյգ յաղթանակէ մը վախճալուն համար իսկ, յամառաբ կը մերժէ իրեն դիմադրող արդի Ռայխստակը լուծել:

Աւելին Մ. Պիւլով ու իր տեղակալը կոմս Բոգատովսքի, նախարարներէն գործերու, ետ պիտի առնեն իրենց ծրագիրը, պարտութիւնն ինչ հրապարակաւ խոստովանելով ու գոհացում տալով իրենց կողմնակիցներուն որոնց աջակցութեանը ամէն ատեն պէտք ունին. այսալ հաւանական չէ, քանի որ կայսրութեան արտաքին

քաղաքականութիւնը մեծապէս այդպէսով պիտի վտանգուէր. այս երկնայրէն ազատելու համար կառավարութիւնը ինչ պիտի ընէ ու ինչմէն չի կրնար իր լիզըն:

Տ. Է.

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Նախքան (Թոյս) թատերախումբը, Պ. Պապահեանի առաջնորդութեամբ, կը շարունակէ, Սանդրայի սրահին մէջ իր ներկայացումաց շարքը, առայժմ չարաթը երեք խաղ խաղալով. հաւատարիմ առաջին օրէն իսկ ըրած խաւովին, թատերախումբը կը շանայ, թատերական օտար բարձր հրաշակներու խաղալով, անոնց մասին հասարակութեան ճաշակ մը տալ: Վ. Հիւկոյի Սէզար Պոմպոյէն ու Էռնանին ետք՝ որոնց ներկայացումներն ամենէն աւելի յաջող անցան, Պապահեանի խումբը ալ աւելի բարձր ու զօռար կտոր մը, Շէքսպիրի Օթելլոն ներկայացնելու ձեռնարկեց, ու կիմանաւ թէ արդէն Հալլէրն ալ պիտի խաղան: Իրապէս, չարաթ գիշերութեան Օթելլոյի ներկայացումին դացած միջոցիս, կը տարակուսէի ներկայացումի յաջողութեանը վրայ: Շէքսպիրի Օթելլոն պիտի ներկայացնեն, ու այն ալ նորակալմ թատերախումբի մը կողմէ: Բարեբախտապէս, ներկայացումին վերջաւորութենէն ետք, սպաւորութիւնն ընդորովին հակառակ ուղղութեան հակեցաւ. սկիզբէն ի վեր Նախքան թատերախումբին տուած բոլոր ներկայացումներու ամէնքին ալ, իրենց մանրամասնութիւնները մէջ հետեւած ըլլալուն, կը կարծեմ ուրիշներէ աւելի իրաւունք ունենալ վստահութեամբ ըսելու թէ՝ Օթելլոյի ներկայացումը մինչեւ այժմ ներկայացուած բոլոր խաղերու մէջ, յաջողութեան պատկուծը եղաւ. մասնաւորապէս Պ. Պապահեան ոչ միայն ատեն, ոչ մէկ գերի մէջ այնքան յաջողած էր. արդէն, հակառակ իր դարաւոր հնութեանը, Շէքսպիրի խաղը այնքան թարմ, այնքան հասարակաց, այնքան այսօրեակաւ խնդրոյ մը պատկերացումով, կը քրքրէ որ ամէն պատկարգի պատկանող էակը բարձրօրէն կը շահագրգռէ: Օթելլոյի ներքին շախմատի վերջածուցները, բնական պատկերացում մին չուրջ կը դառնայ. նախանձը, բարի թէ չոր, ներդաւած թէ քիւնախնդիր, թագուն թէ յայտնի ամէն գարեբու, ամէն կլիմաներու բնակչին համար բնածին է, տիեզերական է, յախտեղիական է, ու ոչ թէ որոշ դասակարգի մը, սահմանափակալ ժամանակամիջոցի մը յատուկ. ահա այս պատճառաւ խաղին յախտեղիական թարմութիւնը:

Աւելին Պ. Պիւլով ու իր տեղակալը կոմս Բոգատովսքի, նախարարներէն գործերու, ետ պիտի առնեն իրենց ծրագիրը, պարտութիւնն ինչ հրապարակաւ խոստովանելով ու գոհացում տալով իրենց կողմնակիցներուն որոնց աջակցութեանը ամէն ատեն պէտք ունին. այսալ հաւանական չէ, քանի որ կայսրութեան արտաքին

Օթելլոյի դերին մէջ, Պ. Պապահեան նախանձաւ մարդու նկարագիրը կը ցաւ ներկայացնել ամենայնաջող արուեստով մը. իմ մասիս, այն համոզումը գոյացուցած եմ թէ Պ. Պապահեան սիրաւորապէս դերերու, տարփածութիւնը, տալանութեանց մէջ այնքան չը յաջողիր. րնդհակառակը, բոլոր կրքեր, անհրաւ արարքներ, ճակատագրական ախարութիւններ թարգմանելու մէջ հանդիսականներու վրայ իր ազդեցութիւնը վերջին ծայր տպաւորիչ է. այս առթիւ, զիմեցի կարծիքներուն մէկ քանիս այնպիսի անձերու, որոնք կարող եւ ընդամենը ողբերգութեան տեսած էին. Պ. Պապահեանի մասին անոնց տպաւորութիւնը այն է թէ՝ բնածին յատկութիւն ու արուեստական արժանիք ունեցող ողբերգութեան, որ հակառակ գինքը չը յապատող անհաւատ պարագաներու, ինքզինքը յայտնել գիտէ. իրաւ ալ, Օթելլոյի դերին մէջ Պ. Պապահեան ողբերգութիւն արժանիքը կը ցաւ. յոյս տալ. Օթելլո, լատինիկ սպայ մը, կարծանաւայ սիրոյն գեղանի Տէգտէմոնայի, որուն հետ կամուսնանայ. բայց, Օթելլոյի բացարձակ վստահութիւնը գրաւող իր մէկ ստորակարգեալը, Եակո, իր մեծին դէմ անողորմ խաղալութեամբ մը տագորուած, ճարպիկութեամբ Օթելլոյի սրտին մէջ կը սրկէ նախանձի թոյնը. ու ահա, այն ատեն հնազնետէ հանդիսատես կը լլանք եղբական տողանցութեանց իր սիրոյն, իր արժանապատուութեան, իր եսասիրութեան մէջ խառնուած ըլլալու տարակոյսէն հիւժող, գայարտող, խենդեցող Օթելլոյին, որ իր ազդեղութեանը գիտակցութիւնն ալ ունի, ու վերջը վերջը, չը իմանալով, կը խղէ գիշեր մը իր կինը, Տէգտէմոնան, որուն անմեղութեանը յետոյ վերահասու լինելով, ինքնապաշտպան կը լինի. Եակոյի գերը կը կատարէր Պ. Երամեան. առաջիկային մէջ կը յուսամ մէկ քանի խօսք ըսել Պ. Երամեանի վրայ, որ իր կատակերգութիւնը դերերուն մէջ մասնաւոր անուանալի արժանիքով մը կը ներկայանայ:

Մինչեւ հիմա տրուած ներկայացումներէն կը ցաւ տեսնել թէ Նախքան հայ թատերախումբը հնազնետէ գէպի կատարելութիւն յառաջդիմելու համար ոչ մէկ ջանք չի խնայեր. յառաջդիմութիւնը արդէն զգալի է. միւս հասարակութեան կը մնայ ուրեմն քաջակերել, խրախուսել թատերախումբը մը, որուն գտնելիք յաջողութիւնը ամենէն առաջ հայ ցեղին արժանիքը օտարներու առջեւ պիտի բարձրացնէ:

Տ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Վ. Ամենայն Հայոց Հայրապետը մօտ օրեր վերստին Թիֆլիս ուղեւորելու է:

— Թիֆլիսի ոստիկանապետը թաղական բոլոր ոստիկանական հսկողներուն առաջարկներ է Դր վարչատունը բերլ բոլոր այն թերքահայ զաղթականները, որոնք հարկաւոր անցած ուղիքը չունին ու թէեւ Ռուսահայաստան գրուելու մերժած են, սակայն Թիֆլիսէ անգամ մը հեռանալէ ետք վերստին հոն վերադարձնեն: Այս կարգի գաղթականներուն բոլորն ալ Թիֆլիսէն պիտի հեռացուն. արդէն

անոնց մէկ կտրուոր մասը, յուսահատ, Պաքսկաստան գաղթած է և մնացածներն ալ այնպէս ընել կորոշեն, յուսով հոս գտնել ապանակ սնուցիւն մը որ գոնէ իրենց անհոտական ազատութիւնը յարգէր:

— Աւելի անգին հրատարակած ենք Պուրկազէն թղթակցութիւն մը՝ զոր նոյն ինքն յարգոյս խրմբագիր վարիչը՝ Տ. Յ. Գուրպէթեան մեզի ուղարկած է. Տ. Յ. Գուրպէթեանի գիտաւորութիւնն ունենալով Պուրկազէն և Ռուսահայաստանի մէկ կտրուոր մասին այցելութիւններ տալ, այդ քողքներու ազգային գործերուն և հայ գաղթականութեան վիճակին վրայ մեր խորագրապետին գիտողութիւնները հետզհետէ իրաւունք մէջ հրատարակելու պիտի հոսութիւնը պիտի ունենանք:

— Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Տ. Սահակ Եպիսկոպոս, իր բնութեանը շնորհաւորող բազմաթիւ խնդակցական հեռագրերէն կը ներկայացնէ մասնաւորապէս Կիլիկիայի քաղաքներէն Ն. Սրբաղնուիթիւնը շնորհաւորողներուն մէջ կը գտնուի նաեւ Առանայի կուսակալ Պահրի փաշա:

— Խոսն ժողովոյ արտօնութեամբ Տ. Սրբաղնապետի արք խորհրդի առաջնորդութեան համար ներկայացուցած է երեք ընտելիներ, Տ. Խոսրով Վ. Պէհերիկեանը (Մշոյ պատ. փոխ սնորդ), Տ. Ս. Կրտիչ Վ. Աղաւնուհին (Քէօթահիոյ տեղապահ) ու Տ. Տաճատ Վ. Ոսկանեանը, որոնցմէ մէկը խորհրդի Գաւառ վարչութիւնը առաջնորդ ընտրելու է:

— Քաղաքական ժողովը իր վերջին նստին մէջ նկատողութեան տուելով Վանայ Երամեան Որբանոցի նախկին սաներու մէկ առաջարկութիւնը, որուն համաձայն փափսք յայտնած էին նոյն որբանոցի 25 ամեայ յորեղեանը կատարել և ատով նոյն հաստատութեան նպաստ մը գործընել, այդ առաջարկութեան իր հաւանութիւնը յայտնած և որոշած է գնել տեղւոյն Գաւառ վարչութեան որ հարկ եղած օրենքակալութիւնը այս առթիւ չի զլանայ:

— Տեղւոյս Եպիսկոպոս Ռուսահայաստան ընկերութեան ընդհանուր ժողովը առաջիկայ կիրակի Նոյեմբեր 10ին կէս օրէն ետք ձիւղ ժամը երկու քիւն ազգային վարժարանի սրահին մէջ գումարուելու է:

Օրակարգն է. Ա. Գործ. Ժողովոյ միամեայ համարաւորութիւն. Բ. նոր Գործ. Ժողովոյ ընտրութիւն:

— Քաղ. Ժողովը նկատողութեան տուելով և արդարացի գրտնելով Աֆիոն-Գարահիսարի թաղ. խորհրդոյն մէկ պաշտօնագիրը, որով տեղւոյն մեծ հրդեհին հետեւանքով Ենկերցիին ու վարժարանին այրելը և հիկիդեհիւնութեւնը վիճակը կը ներկայ

յացներ, հրաւիրած է Պատրիարքը որպէս զի անմիջապէս օգնութեան մը համար հանգանակութեան մը ձեռնարկէ:

— Պօլիս, նախարարներու խորհուրդը, իր վերջին նիստին մէջ կրկին կաթողիկոսութեան ընտրութեան վախճանը Մարգարիտ Պատրիարքին ուղղած թագրի բաւարարից տեղեկագիրները նկատողութեան առնելով, օրինաւորութեան դէմ բան մը չէ գտած. հետեւապէս, Տ. Սահակ Սրբազանի օրինաւոր ընտրութիւնը հաստատող Մարգարիտի Եպարքոսին կողմէ Սուլթանին մատուցուած է, զայն վաւերացնող կայսերական իրաւունքն ինքզինքն համար:

— Պագուի Հայերը գուժար մը սահմանած էին Արհեստանոց-Որբանոց մը հաստատելու համար. նպատակը Թանձնաժողովը որոշեց նոյն գուժարը Մշոյ մէջ բացուելիք արհեստանոցին յատկացնել, այս կերպով նոյն հաստատութեան աւելի զարկ մը տալու համար:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ք Ի Ա

Ի թաւիտա թիւք էլ իսի վէ խարիճիէ նազրը Մ. Բրինէթի պէնիտէ միւստէլէ տէվաթ իթմէքտէ տիր: Ի թաւիտ հիւքիւմէ թի Պապը Ալինին հագգանիէթի իճրա իտէճէյինի վատ իթմէսինի գապու իթմէյուպ, իլլա նոյ. 11է տէյին անըն իճրաւըն թալէպ իթմէքտէ, վէ ագսի թագտիրտէ շէտիտ մուսմէլէրտէ պուլլնաճաւընը պիտիրմիշ, Տախի պահրը ահմէրտէ սէյրու սէֆան իտէն Մասաուհա եւրլի արապլարըն կէմիլէրի իւզէրինտէ իթալիա պանտէրասը պուլլնաճաւըն թալէպ իթմիշ իսէտէ, Պապը Ալի. Սթամպուլ իթալիա սէֆիրի թարաֆընտան տախի նիճէ սէնէյէրտէն պէրու քէնտիսինէ իթմիշ օլտըղը իճպարաթա գարշու պուշը գապու իթմէյէճէյինի պիտիրմիշ տիր: Թիւք հիւքիւմէթի պէօլիւք տէօլլէթէրէ թագտիմ օլընիւք իշիւն Միտի մէսէլէսի հագգըտա, օրատա պուլլնան էլ իշիւնիէ պիտիրնօթա եօլլաւըն: Աթալնա Հալաւըն վերտիրի սոն մալիմաթա նազարէն, բոմանտան Առնօն թաղաֆընտան մահալի սէմուրլարընա վէրիլմիշ օլան սոն իլթիմաթօմըն շէրաթի շիմտիլէ գատար նըզաւմը տաիրէսինտէ իճրա օլընմագտա օլուպ զլթէն 7 գոնաւն կէմիլէրի իթալիա հիւքիւմէթինէ թէսլիմ օլընմըլար:

— Անալտօ թէրսիսնէսինին միահէտիսլէրի տիւն թէրսիսնէի ամիրէտէ Ֆէթհի Պիլէնտ նամ զըրհընըն (միտէլէրինի սէօքմէյէ) եանի թամիշինէ միւպաշէրէթ իթմիշէր:

— Պասրա պիտալէթ մահքէմէսի իքինճի միւսթանիթի, վէ Շաթ. էլ-Արապ նահիլէ միւտիրի, պաղը էլիսաւը նըզաւմա մուգայիր օլաւագ հապա իթմիշ օլտըղլարընտան կէօյա հիւքիւմէթ թարաֆընտան թահթը մահքէմէյէ ալընմըլար:

— Սթամպուլ ինկիլիզ էլ իսի Սըր. Ն. Օ. Քօնօպի պիր թէլէ կրաֆլա ինկիլիթէրա Գրալը Լաուարտ հաղըթիլէրինէ, թիւք, Լօնտօն էլ իսի օլուպ պիր միւտէթտէն պէրու Սթամպուլտա պուլլնան Անթուրալօ բաշանըն վէֆաթընը պիտիրտիլինտէ, քէնտիսին տախի ճէնաղէ ալալընտա իսպաթը վիճուտ իտուպ պիր կիրլանտ թագտիմ իթմէսինի էմր ալմըշ:

ՏԱԼԻԼԻԹԷ

Ալընան սոն մալիմաթա նազարէն պուլլար գապիլնէսի տիւշմիշ տիր:

ՄԻԻԹԷՆԷՎԷԻՅԷ

Էվրօթա ճէրիտէլէրի Բօլարտա քեանի Եարօֆ նամ թիլաւնէ քուլմաւնաւը թարաֆընտան իսպէճ հիւքիւմէթի հիւպալընտա օլարագ ինչա իտիլմիշ օլան Մօտնամ թօրբիտօյը մէտհու սէնա իթմէքտէ տիրլէր, իշպու սէֆինէնին ինչաւընա, կէլէն 1901 սէնէսինին իպթիտասընտա միւպաշէրէթ օլըննապ հէնաւը իքմալ օլընմըլ օլտըղընտան էմըր ինչաւը 10 ալ սիւրմիշ տիր: Պու թօրբիտօ, սիւրաթը հարէքթի սէպէպիլլէ էմալսըղ տըր, զիրա 40 թօնիլաթօ սըգլէթինտէ պիր հալուլէ իլէ սաաթտա 32,5 միլը պահրի կիլմէքտէ տիր (պիր միլը պահրի 1852 մէթրօ) եանի սաաթտա 60 քիւլմ. գատար պիր մէսաֆէ գաթ իտիլար: Էն սէրի ինկիլիզ թօրբիտօսը 10,000 պէյկիր գուլվէթինի հարգ օլտըղը հալտէ եինէ անաւք 31 միլ գաթ իտէրիքէն, մօտն վասսթի պիր մաքիտ իլէ ֆէվգէլատէ սիւրաթընա սէպէպ օլան թէքնէսինին գալէթ հիւպալա եարըլըն տըր: Ալալտ ֆէսմիւր ալմալա իճիլաճ կէօրմէտէն պահրը մուհիթի Աթլասի միրուր իտէպիլի իմիշ: Զաթէն մէթանէթինտէն վիտատէ սիւրաթը հարէքթինի թէքմին իթմէք նիլէթի իլէ եարըլմըլ օլուպ մէվաւտարըն էն միւքէմէլիտիր: Թօրբիտօ աթմաք իշիւն իքի պօրըն օլուպ թօրբիտօլար 45 սան. թիմէթրօ իմիշ:

— Ինկիլիթէրա կաղէթալարըն իշարընա կէօրէ Բօրթուկէզ Գրաւը Տօմ Գարլօս հաղըթիլէրի, Լօնտրալա կիտէճէք օլտըղընտան քէնտիլէրինի հիւքիւմէթ գապու իթմէք իշիւն շիմտիլէն պու պապտէ լազըմ օլան թէտարիքաթ իճրա օլընմագտա իմիշ:

— Պիր խալի սէնէլէրտէն պէրու եահուտիլէրին ֆուրտտա մալիք օլմաք էֆըրարընտա պուլլընտըղլարը մալիմ օլուպ պու կիւն:

լէրտէ զիւտէլէմիշ տիր: Արգու իթտիքլէրի մէվգը, էսկի զէման. լարտա քէնտիլէրինին սահիպ օլտըղլարը վէ շիմտի օսմանլը հիւքիւմէթինէ մէնսուպ օլան Պապէս, տին գրթասրտըր:

Ալալտին Միւսք շէհրինտէ պէօլիւք պիր մէլիս իտուպ պուպտէ իսթիշարէ իթմիշէր տիր: Պու էֆըրարընտա միւքէթիւք օլմաք իշիւն պաշլուճա բարալա իճիլաճլարը օլտըղընտան Ալաւտաթի պէհէր եահուտիլէն սէնէտէ 40 գարիք իանէ թօլլալապ սէնէլի եէքիւնը 40,000 բուպլի օլտըղը կիպի, շիմտիլէ գատար իսթիլարըլարը մէպուլ 3 միլին բուպլիէ պուլիլ օլմագտա իմիշ:

Լօրտ Սալիպարի տախի ինկիլիզ բարալա էնթօրնտա պուլլարըն հէման հէր մէվէքթիլէ թիճալի, պաքէրլիք վէ իմուֆինիտաքի կէօսթէրտիլէրի թէրագգըտան վէ 2500 սէնէտէն պէրու պուլլնա զթարալարա մուգալէմէթ իտուպ, տին վէ տտէթլէրինի մուհաֆազա իթմէլէրինտէն գըլաւ իտուպ պիր կիւն տէյիլ իսէ պիր կիւն էֆըրար. լարընա միւքէթիւք օլաճաղլարըն մէմուլ իթմէքտէ օլտըղըն սէօլլէմիշ:

— Մատրիտտէ թապ օլընան էլ Էնրալալալ կաղէթանին Լիզպօնտան վէրտիլի մալիմաթա նազարէն, Բօրթուկալ էրպապը բօլիթիքաւընէն էհալիլէ գարըն իթմէքտէ օլտըղլարը հագսըղ իշիւնտէն օրանն հէյէթը ասքէրիլէսի խօշնուտ գալմաթընտան, պաղը մէլհուր վէ մէսնէտիլ զապիլիթէր էհալիլին մէնֆաթիլ իշիւն, տիրալմաթլարա գարըն պիր ասքէրի նիւմալիլ եարմաք էֆըրարընտա պուլլնաթըլարընտան, հարպիլէ նազըրը պու նիւմալիլի մէնն իթմէք իշիւն լուղըմ օլան թէտապիլի էլէ ալմըլ իքէն պէօհիւտէ օլաճաւընը իքրար իթմէքտէ իմիշ: Վէ ժէնտալար պիրիլքտէ, պու կիրիլէ հարպիլէ նէգաթէթինին տէվաթ միւքիւնսիլ օլաճաւըն Գուլալ պիտիրմիշէր:

— Սրաւտալտըն վէրտիլի մալիմաթա պինան, Պէրին հիւքիւմէթի, Շէնուպի Աթրիգատա քեանի սլման միւքէթիլքեաթ մէմուրլարընա, Պօէրլէրի քէնտիլլէրի տէրուինտէ գապուլտան իճիլնապ իթմէլէրինի էմր իթմիշ: Ալմանիլա, Պօէրլէրի զալէթ մուլաթարալը պիր միլլէթ տտա իտուպ, իլէրուտէ պէօլիւք վէ ճիտտի միւքիլաթլար շըգարմա. սրնտան գօրգմագտա տըր: Վէ Տէյիլ թէլիլալըն իլուպարընա կէօրէ, Ալմանիլ հիւքիւմէթի քէնտիլլէն 30 գատար պօէր ֆա. միլնաթ թարաֆընտան Աթրիգանըն Շէնուպը զարպիլնտէ օլան ալման միւքէթիլքեաթ լուտա իս. քեան իթմէք իշիւն թագտիլ ի. տիլէն թէճանամէի տախի թէտա իթմիշ օլտըղըն սէօլլէմէքտէ տիր:

ՏՕԲ. ՆԻԲՕԼԻՆԱ Ս. Է. ՔՕՎԱՉԷՎԱ

Շէհրիմիգտէ պու նամ իլէ միւքէթա պիր մահիր թապիլէ մէվճուտ օլուպ, կէրէք խարիճի վէ կէրէք տախիլի խաթ լարգարընա պագմագտա աըր: Հէր կիւն, տէօրալնէն ուշաթտա, ուլիցա Վօլոնիտէ քեանի 13 նօմբօլը խալնէսինտէ հասթա գապու ի. իտիլար: 1—5



ԻԼԱՆ

Եունանըն եէսի վարօր գուժանեաւընը վարօրլարը հէր հաթթա բազար կիւնէրի լիմանըլա միւքալէլէթ իտուպ, սալը կիւնի պուրաւտան հարէքթի իտիլար: Սթանպուլ, Զանագ-Գալէյ, Բիւրէյա, Բաղրասա վէ Բօրթուկա օղրալարաք Ալ-Սարանտալա գատար կիտէյար: Եօլըլար Բիւրէյա, Ալէքսանտրա, Մարսիլիա վէ Ամբիլա իշիւն ագթարմա օլապիլիլէր:

Վարօրլարըն պէօլիլէթի, թէմիլլիլի վէ չարուլըրը վէ եօլըլարըն լաճաթըլը իշիւն կէօսթէրիլէն նէգաթէթ ճիւլլէյէ մալիլա օլուպ թագտիր օլընմագտա տըր: շիմտիլ ֆիլալարըն էհալիլիլէտէ սալ վէ զալէթ իթմիլիլի կիպի շէնտէթը մէօթէպէրէ իլէ կէլէն ֆուգարալարա մուքէթին իտէճէկիմիլի վատ վէ իլան իտէրիլ:

Բաղպէթիլ միւքէթիլիլի տախի ֆըրասթտան իսթիլաթէ իտէրէք, պիրինճի ուշաթըրտա, իսկէլտէ Մանչեսթըր սօգաղընտա 386 նօմբօլը եազըլանէմիլլէ թէլիլի պուլլաւաճաղարըն իմիտ իտէրիլ:

Մէքթըր վարօր գուժանեաւընա սէնթիլ:

Ղ. ԼՈՒԼՈՒՏՈՐՈՒԼՕ

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Յառաջիկայ 9 Նոյեմբեր, չաբաթ գիւր Զայ դերասանական խմբին կողմանէ մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացուի մեծանուն Շէքսպիրի Էրկերէն ամենէն մեծը, որ է ՀԱՄԼԵՏ, դերասանական խումբը մասնաւորապէս միայն սոյն խաղին հազուստեւրուն համար մեծ ծախք ըրած է:

Թատերասէր ժողովուրդը միայն պիտի քաջալիլէ եւ գնահատէ դերասանական նորակազմ խումբը որ իր ամեն ներկայացումները թատերական օրինաց համաճան կը շարունակէ:

Փորձի դրուած է Շէքսպիրի «Մակպէթ» եւ ՀԱՅԵՐԷՆ լեզուաւ «Վառպուրականի Հերոսները», որ մօտ օրէն պիտի ներկայացուի:

Одговорникъ Н. Драгулевъ

Щеп. на Хр. Н. Войниковъ—Варна